ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/123

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թ. N 123

«ԱԼԱՎԵՐԴՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ**
Գործունեության հասցեն՝ **ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին սարահարթ 3/6ա**
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 20-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՊՔ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 02 փետրվարի 2024 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 23 հուլիսի 2024 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 30 սեպտեմբերի -02 հոկտեմբերի 2024 թ
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 27 դեկտեմբերի 2024 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 13 փետրվարի 2025 թ.

ԱՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Հերմինե Գրիգորյան** - Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Ամալյա Նավասարդյան** - Սևանի բազմագործառութային պետական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
- **Ամալյա Գրիգորյան** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, անկախ փորձագետ, փորձագիտական խմբի անդամ:
- **Արտակ Խաչատրյան** - Հայաստանում Եվրոպական համալսարանի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԱՊՔ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. ԱՊՔ-ում առկա են բարելավման կարիք ունեցող ուղղություններ, որոնք վերաբերվում են որակավորումների արժանահավատ շնորհման գործընթացին:

Քոլեջը հիմնականում ապահովում է շրջանավարտների գործնական հմտությունների ձևավորումը և որակավորումների արժանահավատ շնորհումը՝ առկա կրթական ծրագրերի, դասախոսական կազմի և նյութատեխնիկական ռեսուրսների շնորհիվ: Սակայն ոլորտում արձանագրված մի շարք խնդիրների լուծման համար անհրաժեշտ է հետևողական աշխատանք և համակարգված բարելավում:

Քոլեջին նպատակահարմար է կազմակերպել բոլոր կրթական ծրագրերի պարբերական ներքին աուդիտ՝ վերանայելով ուսումնական պրակտիկաների կազմակերպման արդյունավետությունը և ապահովելով գործատուների ներգրավվածությունը բոլոր մասնագիտությունների գծով՝ ուսումնական գործընթացի

բարելավման նպատակով: Նշանակալի է նաև տեղայնացնել մասնագիտությունների ազգային և միջազգային չափանիշների պահանջները, դրանք դարձնելով կրթական ծրագրերի բարելավման գործնական հիմք: Որպես շարունակական զարգացման կարևոր ուղղություն՝ քոլեջին խորհուրդ է տրվում ներդնել կրթական ծրագրերի մշտադիտարկման և բենչմարքինգի մեխանիզմներ: Բացի այդ, անհրաժեշտ է լուծել դասախոսական կազմի կայունության և կարողությունների անհամամասնության խնդիրները՝ խթանելով որակյալ մասնագետների ներգրավումն ու պահպանումը՝ արդի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթության ապահովման նպատակով:

II. **Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում:**

Քոլեջում ռազմավարական կառավարման գործընթացի կատարելագործման անհրաժեշտություն է նկատվում՝ հատկապես տվյալների հավաքագրման, դրանց հիման վրա որոշումների կայացման գործընթացներում օբյեկտիվ տվյալների օգտագործման ուղղությամբ, ինչի համար անհրաժեշտ է մշակել և ներդնել տվյալների հավաքագրման գործիքակազմ և հստակ կանոնակարգում: Միևնույն ժամանակ կարևորվում է հաշվետվողականության մեխանիզմի բարելավումը՝ ապահովելով տեղեկատվության կանոնավոր հոսք դեպի կառավարման խորհուրդ և ամրապնդելով կառավարման թափանցիկությունը: Անհրաժեշտ է սահմանել և կիրառել գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ-եր), որոնք կհանդիսանան ռազմավարական պլանավորման, մշտադիտարկման և հաշվետվողականության հիմք: Բացի այդ, անհրաժեշտ է ներդնել որակի ապահովման համակարգի գործուն միջավայր, որը կաջակցի օբյեկտիվ և շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանը: Քոլեջում առկա են թափուր ռազմավարական հաստիքներ, ինչպես նաև բացակայում են արտաբյուջետային միջոցների ձևավորման ծրագրեր, որի շուրջ քոլեջը պետք է քայլեր ձեռնարկի:

III. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունն դեռևս չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը***

Քոլեջում հետազոտական և ստեղծագործական գործունեությունը, ինչպես նաև միջազգայնացումը համարվում են զարգացման առաջնահերթ ուղղություններ, սակայն պահանջվում է շարունակական բարելավում. մասնավորապես՝ անհրաժեշտ է ընդլայնել կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ինտեգրումը՝ դասախոսների հետազոտական աշխատանքների արդյունքների ներառմամբ, ինչպես նաև իրականացնել կարիքների վերհանում՝ միջազգային գործընկերների հետ համագործակցության ընդլայնման նպատակով: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել օտար լեզվի բարելավման համար՝ այդ ուղղությամբ միջոցների նախատեսմամբ քոլեջի բյուջեում:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնել փորձաքննություն:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ԱՊՔ Կառավարման խոհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույցը:
3. Թերությունների վերացման ծրագրում նախատեսել I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողություններ՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
4. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտը մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:

5. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԱՊՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**
2025 թ., մարտի 20